# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 03

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<14>> ապրիլի 2025թ. ք. Երևան

2025 թվականի ապրիլի 14-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ա. Խաչատրյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| Ա. Ստեփանյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ |
| Տ. Գասպարյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ |
| Ռ. Այվազյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ: |

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 դիմումների քննարկում:

2. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3. Ֆիզիկական անձանց կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 դիմումի քննարկում:

4.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 2 դիմումների քննարկում:

1. **Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում:**

Քննարկվեցին՝

Ֆիզիկական անձ՝ ԿԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍԻ ԱՐԱԲՅԱՆԻ 02.04.2025թ. և ֆիզիկական անձ՝ ԳԵՐԱՍԻՄ ՌԱՖԻԿԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ 07.04.2024թ. ներկայացված դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Ֆիզիկական անձ՝ ԿԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍԻ ԱՐԱԲՅԱՆԻ 02.04.2025թ. և ֆիզիկական անձ՝ ԳԵՐԱՍԻՄ ՌԱՖԻԿԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ 07.04.2024թ. ներկայացված դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտերը ուսումնասիրվել են լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն և գազաբալոնների վկայագրում անցնելու փաստը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԿԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍԻ ԱՐԱԲՅԱՆ | 4 կողմ, 0 դեմ |
| ԳԵՐԱՍԻՄ ՌԱՖԻԿԻ ԱՅՎԱԶՅԱՆ | 4 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2. «ԼԻՄԻՏԼԵՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով օդանավակայանի օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման SO N 00001 լիցենզիայի ներդիրներ տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:**

Քննարկվեց՝

«ԼԻՄԻՏԼԵՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.04.2025թ. հայտը և հայտին կից ներկայացված նյութերը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման SO N 00001 լիցենզիայի թվով 1 ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ԼԻՄԻՏԼԵՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.04.2025թ. հայտը և հայտին կից ներկայացված նյութերը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպման SO N 00001 լիցենզիայի թվով 1 ներդիր տրամադրելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| «ԼԻՄԻՏԼԵՍՍ» ՍՊԸ | 4 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին, հայտը ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**3. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:**

Քննարկվեց՝

Ֆիզիկական անձ՝ ԱՐՏՈՒՇ ԹՈՐԳՈՄԻ ԲԱԲԱՅԱՆԻ 02.04.2025թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11158 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց ֆիզիկական անձ ԱՐՏՈՒՇ ԹՈՐԳՈՄԻ ԲԱԲԱՅԱՆԻ 02.04.2025թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11158 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ դիմումը և ՏՖ N 11156 լիցենզիայի և N 00001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| ԱՐՏՈՒՇ ԹՈՐԳՈՄԻ ԲԱԲԱՅԱՆ | 4 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**4. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաները և լիցենզիաների ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտերի քննարկում:**

Քննարկվեցին՝

«ԱՐՔԱՅՈՐԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 20.03.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05199 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00064 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և անհատ ձեռնարկատեր ՍԵՅՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 07.04.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05450 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց «ԱՐՔԱՅՈՐԴԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 20.03.2024թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05199 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00064 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և անհատ ձեռնարկատեր ՍԵՅՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 07.04.2024թ. դիմումը՝ անհատ

ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման ՏԾ N 05450 լիցենզիան և N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումները և դիմումներին կից փաստաթղթերը՝ լիցենզիաների և ներդիրների բնօրինակները և ներդիրների կորստյան մասին հայտարարությունները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| «ԱՐՔԱՅՈՐԴԻ» ՍՊԸ | 4 կողմ, 0 դեմ |
| ԱՁ ՍԵՅՐԱՆ ՍԵՐԳԵՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | 4 կողմ, 0 դեմ |

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան